

Հռենոսի աջ եղերքէն կը բաժնուի ,
դէպ 'ի Լւորդելոյ կ'ընթանայ 'ի հիւ-
սիս , ու կու գայ այս ալ Սէօիւտէրսէէ
կը հոսի : Ուրիշ իրեք ճիւղ ալ կան , որ
'ի սկզբան Հռենոսի հոլանտա մտնա-
լու ժամանակն ունեցած ուղղութեամբ
բը կը վազեն , սակայն վերջէն դէպ 'ի
արեւմտեան կողմ կը շեղին , և ասոնցմէ
մէկը Հռենոս անունը կը պահէ ու կ'եր-
թայ Հիւսիսային ծովը կը թափի Էյտ
քաղքին քովերը . իսկ մէկալ երկուքը ,
որ Էհ ու Սահալ անուամբ կը կո-
չուին , Սէօզ գետին հետ կը խառնուին ,
և կղզիներու , հոսանքներու ու ջրանցք-
ներու լաբիւրինթոս մը ձևացընելէն
վերջը՝ յետոյ ուրեմն ծով կը թափին ,
300 փարսախ տեղ վազելէն վերջը ,
այսինքն Հռենոսի բխման կէտէն՝ Լե-
տուլ լեռնէն առնելով :

Լւորդայի գլխաւոր և անուանի գե-
տերէն մէկը կը համարուի Հռենոս՝
թէ իր մեծութեանն և թէ իր եղերաց
բնական ու արուեստական գեղեցկու-
թեանցն համար : Սիւնգամայն շատ
տէրութեանց իբրեւ սահման և իբրեւ
պատուար համարուած է : Վարձեալ
իբրեւ մի միայն վաճառականութեան
յարմար միջոց մը սեպուած է , որով
հետեւ գրեթէ 200 փարսախ տեղ նա-
ւարկելի է , Պազիլէայէն սկսեալ ին-
չուան ծով , և հեռաւոր գետերու հետ
հաղորդակցութիւն ունի 'ի ձեռն ու
ժանգակ գետերու և ջրանցից : Սէ-
ջէն ազնիւ ոսկի ալ կ'ելլայ խիճերու
հետ խառնուած : — Հռենոսի ջուրը
վճիտ ու ամենապայծառ է , ինչպէս որ
իր անունն ալ հին Վերմանացոյց լե-
զուովը նոյն իմաստը կը նշանակէ :

ԲՆԱԿԱՆՔ

ՕԴԵՐԵԻՈՒԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Լւորդայի ամենեւն տաք ամառները՝ Է դարեւ սկսեալ :

658	Թոռալանին	Լոլոր աղբերակունք ցամքեցան :
879	„	Սլորմնի մերձակայքը մշակները անդաստան- ներուն մէջ ինկան մեռան :
893	„	Հարաւային Լւորդա արմտիք և պտուղք երելով չորցան :
1000	„	Վաղղիոյ գետերն ու աղբիւրները ցամքե- լով ձկները նեխեցան , որով ժանտամա՛հ պատճառեցին :
1022	„	Լւորդիոյ այլ և այլ կողմերը առհասարակ արք և արջառք տաքութենէ մեռան :
1132	„	Լճակիա նահանգին մէջ գետինը պատռե- ցաւ , գետերն ու աղբիւրները աներեւութա- ցան , ու Հռենոս ցամքեցաւ :
1159	„	Խտալիոյ դաշտորէից մէջ ամէն բան տոչորե- ցաւ :
1171	„	Վերմանիա անհնարին տաք :
1260	„	Պէլայի պատերազմին միջոցը՝ արեւուն ճա- ռագայթից կիզողական սաստկութենէն զի- նուորները մեռած գետին փռուեցան :

- 1275 և 1276 „ Սաստիկ տաքութենէն Վաղղիա և Ստա-
լիա ամենայն արմտիք չորցան :
- 1293 և 1294 „ Նոյնպէս արտաքոյ կարգի ջերմութիւն :
- 1303 և 1304 „ Սուառ , Հռենոս , Սեյն և Վանուբ ցամքե-
ցան :
- 1393 և 1474 „ Երկիրը երածի պէս էր , և Վանուբը Սւն-
կարիոյ մէջ ցամքեցաւ :
- 1494 „ Սենեակոյ ջրերուն մէջ ձկները սատկեցան :
- 1538 , 39 , 40 և 41 „ Լնտանելի տաքեր :
- 1556 „ Շատ մը աղբիւրներ ցամքեցան :
- 1559 „ Սենեակի հինգ ամէկ ետքը Լմենայն Սըր-
բոյ տօնին օրը սկսաւ անձրևել :
- 1615 և 1616 „ Բոլոր Եւրոպա ցամաքութիւն :
- 1646 „ Վաժնդակ ջերմութիւն :
- 1652 „ Սկովտիա այնպիսի սաստիկ ցամաքութիւն ,
որ երբեք պատմութեան մէջ չյիշուիր :
- 1698 „ Սաստիկ տաք :
- ԺԸ դարուն առջի երեք տարիներուն ամառները սովորականէն շատ ա-
ւելի տաք եղան :
- 1718 „ Հասարակաց առողջութեանն համար Բա-
րիզ Թատրոնք խափանուեցան . հինգ ամիս
անընդհատ և ոչ անձրևի կաթիլ մը Թա-
փեցաւ . Բարիզ Հ . ջերմաչափը ինչուան
36° ելաւ . խոտն ու մարգագետինք գրեթէ
էրեցան . պտղատու ծառերը քանի մը ան-
գամ ծաղկեցան :
- 1723 „ Ջերմութիւն և ցամաքութիւն :
- 1743 , 44 , 45 և 46 „ Լմենատաք ամառներ :
- 1748 , 54 , 60 , 67 , 78 , 79 և 88 „ Սաստիկ տաքեր :
- 1751 և 1753 „ Հ . ջերմաչափը մինչև 37° և 38° ելաւ :
- 1802 „ Բարիզ այնպիսի տաք եղաւ , որ ջերմաչա-
փին գիւտէն ետքը նմանը չէր տեսնուած :
- 1811 և 1818 „ Լնհանդուրթելի տաք :
- 1830 „ Վեռ ևս Բարիզ կը յիշուի այն սաստիկ
տաքն որ ըրաւ յուլիսի 27^{էն} , 28^{էն} և 29^{էն} :
- 1835 „ Հրակէզ տաք :
- 1846 „ Բարիզ շուքին մէջ Հ . ջերմաչափը 36° կը
ցուցնէր , և գրեթէ 50° արևուն մէջ և
անհով տեղ , ինչպէս Սուվրի գաւիթը :
- Իսկ 1848^{էն} վերջը հանդիպած տաքերը ծանօթ են ամենուն :

